«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ առժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Շահումյանի Ա. Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց

Արտաշատ 2023

Թեմա՝ Սովորողների մեջ առժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հարցը՝ Ինչպե՞ս ձևավորել առժեքային համակարգը սովորողների մեջ պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում:

Բովանդակություն

1. Ներածություն.....4
2. Հետազոտության նպատակը և խնդիրները.....5
3. Գլուխ 1: Արժեքային համակարգի ձևավորումը հայոց պատմության դասավանդման շրջանակներում.....6
4. Եզրակացություն.....14
5. Օգտագործված գրականության ցանկ.....15

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակն է սովորողների մոտ ձևավորել արժեքային համակարգ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունը ու կառուցվածքը: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամին,
- զարգացնել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունները,
- լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Ներածություն

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:

Աճող սերնդի դաստիարակության գործում հանրակրթական դպրոցն առաջատար դեր է խաղում, ահա թե ինչու մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման հարցերը ներկայումս առանձնակի հրատապություն են ձեռք բերում: Ժամանակակից ուսուցչին ներկայացվող սոցիալական պատվերը ուսումնադաստիարակչական գործընթացը որակապես նոր մակարդակի բարձրացնելն է:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում:

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի 4 նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է հայոց պատմության դերն ու նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Գլուխ 1

Արժեքային համակարգի ձևավորումը հայոց պատմության դասավանդման շրջանակներում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:

«Հայոց պատմություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացի:Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Պատմության ուսումնասիրումը հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող, ազգային արժեհամակարգը կրող անձ ու քաղաքացի:Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և

կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու 7 շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու

պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը 8 նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» : Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, մրցակցություն և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Փորձենք հասկանալ թե ինչպես է ձևավորվում արժեքային համակարգը պատմության դասերին: Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի հանդամասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս

ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն: Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Այսօր մենք հայտվել ենք պատմական իրողության այնպիսի խաչմերուկում, որտեղ միաձուլվում են մեր նախնիներից ժառանգած և սերունդներին շռայլորեն փոխանցված իրական արժեքները: Վերապրելով այս ամենը ՝ փաստում ենք այն ճշմարտությունը, որ այսօր կրթությունը պետք է դառնա մեր նախնիների արյան գնով ձեռքբերված, սրբությամբ պահպանված և մեծ հույսով, հավատով մեզ վստահված ազգային, մշակութային, հավատքի արժեքները: Չէ որ դրանով է պայմանավորված մեր ազգի ինքնությունն ու մեր ապագան: Ազգային արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է կրթական բարեփոխումների հիմքը: Անշուշտ, դա արցախյան շարժման ձեռքբերումներից է: Այսօր ազգային դաստիարակության մասին խոսելիս, հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազգային դաստիարակության էության ճիշտ ըմբռնմանը: Ազգային ու համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ ՝ աստիճանաբար ձևավորվելով, որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ընդհանրապես, ճիշտ ըմբռնած ազգային իրական և ճիշտ ընբռնված համամարդկայինի մասն է: Ազգայինը վերաբերվում է տվյալ ազգի հոգեբանության, լեզվի, դավանանքի, առհասարակ ՝ զուտ ազգային արժեքների խտացմանը դրանից բացի ենթադրվում է նաև համամարդկային արժեքների խտացում: Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Հիրավի, ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, գերական ռազմավարության նշանակություն ունեցող հիմնախնդիր է ազգային արժեհամակարգի ձևավուրումն ու զարգացումը: Ինչպես գիտենք, այսօր վտանգված է սովորողների ազգային գաղափարախոսությունը: Նկատվում է նահանջ որոշ արժեքներից, որոնք անհրաժեշտ են կրթադաստիարակչական համակարգում բովանդակային հագեցվածություն ՝ ազգային մշակութային արժեքներով: Դպրոցի կարևորագույն նպատակներից է ազգային արժեհամակարգի ձևավորումը: Անհրաժեշտ է ազգապահպան գործում վկայակոչել հայոց մեծերին, ովքեր բոլոր դարաշրջաններում

ջանացել են իրենց անհատականությամբ, ստեղծագործական արգասիքով, ամրապնդելու ազգային ոգին, հպարտությունը հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը:

Դարերի հոլովույթում պետականազրկված աշխարհասփյուռ հայերն արտերկրում կարողացել են պահպանել ազգային հոգեկերտվածքը, ոգին, դիմագիծը. «Նրանց բարեպաշտ միտքը երբեք չի այլասերվել», «երբեք չի բթացել դեպի կրթությունն ու կատարելագործությունը խոյացող նրանց ոգին»: Տարագրված հայերն ազգային պատվախնդրությամբ, զոհողություններով շարունակել են պահպանել, զարգացնել դարերով սրբացած ազգային արժեքները, բարքերը սովորույթները, ավանդույթները ՝ հիմնելով մշակութային կրթական հաստատություններ, եկեղեցիներ, 9 դպրոցներ: Հանրակրթական համակարգի բարեփոխումների ոլորտում կարևոր է համարվում արժեհամակարգերի ճիշտ ձևավորումն ու զարգացումը: Այսօր դրա իրականացումը ռազմավարական նշանակություն ունի: Շատ կարևոր է կրթության ողջ համակարգում համամարդկային, ազգային, մշակութային, հոգևոր-բարոյական արժեքների մարդասիրացման և անձնակողմնորոշիչ մոտեցման խնդիրների լուծումը: Մեզ շրջապատող իրականությունը փոխվում է զարմանալի արագությամբ փոխվում են նաև արժեքային կողմնորոշիչները, որոնք մեծ նշնակություն ունեն սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում: Այսօր հանրակրթության ոլորտում հասարակական հարաբերություններում տարբեր երևույթներ կորցնում են իրենց իսկական նշանակությունը: Այդ երևույթները (արժեքները) իմաստավորման և վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն, թելադրված հասարակության բնականոն զարգացմանբ և մարդկանց պահանջմունքներով:Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել գիտակցված և կայուն գիտելիքներ պետք է տան դպրոցը և բուհը: Այս փուլում ձևավորվում է անձին առանձնահատուկ «արմատային համակարգը», որն օգնում է նրան կողմնորոշվելու այնպիսի արժեքների հարցում, ինչպիսիք են՝ ընտանիքը, ազգը, հայրենիքը: Գաղտնիք չէ, որ անձնային որակների, բարոյական արժեքների և հայրենասիրության ձևավորումը սկսվում է ընտանիքում, իսկ հետագա զարգացումը շարունակվում դպրոցում, բուհում, բանակում, աշխատանքում և այլ ոլորտներում: Անուրանալի է դպրոցի դերը, որտեղ երեխան անցկացնում է իր կյանքի կարևորագույն տարիների մի մասը և հենց այդ տարիներին էլ նա դառնում է սեռահասուն, առավել գիտակից, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ և որոշակի արժեքներ կրող: Այդ առումով, և՛ ուսուցիչները, և՛ դպրոցի հոգեբանը, և՛, հատկապես, զինղեկը կարևոր առաքելություն ունեն լինելու աշակերտների, ապագա զինվորների մեջ պարտքի, հայրենասիրության, քաջության և բարոյական արժեքների ջատագովը,

արթնացնելու համար : Ռազմահայրենասիրությունը աշակերտների գաղափարական մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոցներից է: Հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հետևողական աշխատանք է: Հայրենասիրական դաստիարակությունը ներառում է ոչ միայն անձի հոգևորբարոյական, քաղաքացիական և աշխարհայացքային հատկանիշների ձևավորումը, որոնք դրսևորվում են հայրենիքի, սեփական տան նկատմամբ եղած սիրո մեջ, այլ նաև ավանդույթները, սեփական ազգի արժեքները, սեփական ազգային մշակույթը, սեփական հողը պահպանելու և բազմապատկելու ձգտման և հմտության մեջ:

Խոսելով հայրենասիրական դաստիարակության մասին՝ պետք է երիտասարդությանը դաստիարակել երկրի անցյալի հիման վրա, քանի որ հայրենասիրություն չի կարելի սովորեցնել անմիջապես և ընդմիշտ: Հայրենասիրությունը մարդու անձի հատկանիշ է, որը դրսևորվում է հայրենիքի նկատմամբ եղած սիրո, հավատարմության, հայրենիքին ծառայելու պատրաստակամության մեջ: Դա մարդու կապվածությունն է հայրենի հողին, լեզվին, մշակույթին և լավագույն ավանդույթներին, որը հիմնվում է համամարդկային արժեքների վրա. կյանք, առողջություն, հոգևոր-բարոյական դաստիարակություն, անձի իրավունքներ և ազատություններ: Այն ուղղված է հայրենասեր քաղաքացիների դաստիարակմանը, որոնք կարող են սոցիալականացվել քաղաքացիական հասարակության պայմաններում, հարգել անձի իրավունքները և ազատությունները:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Դասընթացը նպաստում է իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը այն սկսելով իր անձից, իր սոցիալական ու բնական միջավայրից:Հայոց պատմություն առարկայի հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային

ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյականային այլ հատկանիշներ:

Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը:Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերահիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը, դա նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը: Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել օրինակ, հայդուկնեևրի, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց

գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, զատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրհանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը: Այսպիսով ՝ ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբածություն և սառը դատողություն: Բանավեճերի միջոցով նրանց ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրը ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին ու սովորական հայ քաղաքացին: Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով, թե ինչպես են փոքրաթիվ հայկական ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին՝փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռությունը չէ, այլ նպատակը՝հանուն որի ելնում են պայքարի: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ աննկարագրելի բերկրանք է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով արժեհամակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթաքում կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովչդի համար: Խոսքը արժեքային համակարգի ձևավորման մասին է: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային, հոգևոր և բարոյական հիմքի վրա:

Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ ազգային արժեհամակարգի ձևավորմանը դպրոցում տարբեր դասաժամերին անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել, իսկ հայոց պատմության դասաժամերին՝ առավել ևս: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին:

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը:

Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով:

Ազգային ավանդույթները , տոները ձևավորում են ազգային աշխարհայացք, իսկ պատմությունը դառնում է հայրենասիրական գաղափարների ստեղծման շարժառիթ:

Հաջող ուսուցումն առանց արժեհամակարգի անհնար է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ուշինսկի Կ.Դ., Սանկավարժական ընտիր երկեր, 2 հատորով, հ. 1, Երևան, Հայպետուսմանկհրատ,1958թ., էջ 191
2. Ձեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն»:
3. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search
4. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
6. https://www.wikipedia.org/